600.0115.01.04.20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

1 ապրիլի 2020 թվականի №115Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի №457Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» օրենքի 30-րդ հոդվածի 1-ին կետը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասը, 33-րդ և 34-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը և հաշվի առնելով «ՏԵԼԻԱ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2019 թվականի հոկտեմբերի 29-ի, նոյեմբերի 25-ի և 2020 թվականի մարտի 20-ի գրությունները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2017 թվականի հոկտեմբերի 25-ի «ՏԵԼԻԱ ՄԱՅՆԻՆԳ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը «Աստղաբերդ» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №457Ա՝

   1) որոշման մեջ «մինչև 2020 թվականի հոկտեմբերի 25-ը» բառերը փոխարինել «մինչև 2020 թվականի ապրիլի 2-ը» բառերով.

   2) որոշման 2-րդ կետով հաստատված հավելվածի՝

      ա. 5-րդ կետից հանել «(գյուղ Գեղի և գյուղ Նոր Աստղաբերդ)» բառերը,

      բ. 9-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«9. Կայանի փաստացի տեղակայված (դրվածքային) հզորությունը 7800 կՎտ է, իսկ էլեկտրական էներգիայի արտադրության գործունեությունն իրականացվում է բացառապես հետևյալ ագրեգատներով (սարքավորումներով)՝

1) հիդրոտուրբին №1՝ HLA920-WG-84-P, 1710-5260 կՎտ, 2018թ.,

2) գեներատոր №1՝ SFW 3100-8/1730, 3100 կՎտ, 2018թ.,

3) հիդրոտուրբին №2՝ HLA920-WG-84-P, 1710-5260 կՎտ, 2018թ.,

4) գեներատոր №2՝ SFW 3100-8/1730, 3100 կՎտ, 2018թ.,

5) հիդրոտուրբին №3՝ XGA-W-63/2*14.5, 462.8-2314 կՎտ, 2018թ.,

6) գեներատոր №3՝ SFW 1600-8/1430, 1600 կՎտ, 2018թ.:»:

2. «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերությանն ազատել 2019 թվականի դեկտեմբերի 5-ի №0.AB.100.12CIB.PIED.0.10911.19 երաշխիքի համաձայն Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի առջև ստանձնած 19,487,500 (տասնինը միլիոն չորս հարյուր ութսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ երաշխիքային պարտավորությունից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի ապրիլի 2-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ**

ք. Երևան
1 ապրիլի 2020թ.